# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 52

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Հ. Պողոսյանը/

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
7. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ
## <<30>> ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 53-Ն

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն փաստը, որ 2019թ.-ի համայնքային բյուջեի մուտքեր օտարումից եկամտային մասում առկա են նախատեսված պլանից ավել եկամուտներ, ինչպես նաև հաշվի առնելով «Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքը գազաֆիկացնելու, լոկալ ջեռուցման համակարգի տեղադրման և կապիտալ նորոգման անհրաժեշտությունը, «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» ԲՀ-ի համար մեկ թրթուրավոր տրակտորի ձեռքբերման անհրաժեշտությունը, ասֆալտապատման աշխատանքների որոշակի ֆինանսավորման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 8-րդ ենթակետերի պահանջներով, համայնքի ավագանու կանոնակարգով

### ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2019թ. բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածների հետևյալ փոփոխությունները.

1. Ավելացնել համայնքի 2019թ. բյուջեի ընդհանուր եկամուտները 20.050,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս եկամուտները 646.210,872.1 հազ. դրամ: Այդ թվում ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտները 20.050,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս եկամուտները 88.936,672 հազ. դրամ և սահմանել մուտքեր օտարումից եկամտային պլանը 26.050,0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝
   ա/ 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի
   -- 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 4.000,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 44164,972.1 հազ. դրամ,
   բ/ 0911.51 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի
   -- 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 8.000,0 հազ.դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 8.000,0 հազ. դրամ,
   -- 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 400,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 400,0հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 150.370,0 հազ. դրամ,
   գ/ 0432.55 «Գազաֆիկացում» ծրագրի
   -- 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը 3.000,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 3.000,0 հազ. դրամ,
   -- 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 150,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 150,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 3.150,0 հազ. դրամ,
   դ/ 0661.51 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ծրագրի
   -- 5121 «Տրանսպորտային միջոցներ» հոդվածը 4.500,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս

ծախսային պլանը 4.500,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 141.222,0 հազ. դրամ, Ընդամենը ավելացում 20.050,0 հազ. դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր

**ԿՈՂՄ (8)**

**ավագանու անդամներ՝**

1. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
7. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ